ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 95-Ա

«13» հուլիսի 2021 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3,9 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 17-րդ և 18-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 147 եզրակացության և Հայաստանի Հանրապետության Շիրակի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 47-Ա որոշումը.

ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի (Բյուրակն բնակավայր) վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 3,9 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտը (կադաստրային ծածկագիրը՝ 08-033-0107-0001) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման համար տրամադրվող հողամաս գործառնական նշանակություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասը օտարելու, այդ հողամասում հանքի գործունեություն ծավալելու և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հուլիսի 2021 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 96-Ա

«13» հուլիսի 2021 թվական գյուղ Ամասիա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանս Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, 219,1 հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 09-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի վարչատուգանային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 38-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի կարգադրությամբ Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2021 թվականի հուլիսի 09-ին կազմած՝ Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու / գյուղ Ամասիա, 1-ին փողոց, օբյեկտ 7/ կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս 2021 թվականի հուլիսի 09-ին Օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են Հայաստանյանց Առաքելական Սուրբ

եկեղեցու կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն :

Հայաստանյանց Առաքելական Սուրբ եկեղեցին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 26-րդ փողոց, 7/1 հողամաս հասցեում չունենալով համապատասխան շինարարական թույլտվություն, ինքնական շինարարական աշխատանքներ են իրականացրել, այսինքն կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Ի նկատի ունենալով վերոգրյալը ամբողջությամբ հաստատված եմ համարում, որ Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցին թույլ է տվել վարչական իրավախախտում, որ նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվաշի 1-ին կետի, 283-րդ, 286-րդ, 287-րդ, 298-րդ, 305-րդ և 154-րդ հոդվածի 1-ին մասի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-իմ մասի ա) կետի, 88-ր հոդվածի, <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն, իր միջոցների հաշվին ապահովելու ինքնակամ շինարարության հետևանքների վերացումը, վերականգնելով նախկին տեսքը:
3. Որոշման օրինակը ուղարկել Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն պատշաճ իրազեկելու պահից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով սահմանված երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից պետք է վճարվի սույն որոշումը հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«13» հուլիսի 2021 թվական
գյուղ Ամասիա